

## **ՀՀ ֆինանսների նախարարություն**

**Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ 3/5**

**26 հունվարի 2016 թ.**

Քննարկվեց «Սէմուար» ՍՊԸ 24.12.2015 թ-ի գանգատը ՀՀ ՖՆ Մաշտոցի ՀՏ 03.07.2015 թ-ի թիվ 5104052 ակտով առաջադրված տուգանքի կրկնապատկման դեմ:

### **«Սէմուար» ՍՊԸ գանգատում բերված փաստարկները.**

Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 26.06.2015 թ-ի թիվ 5104052 հանձնարարագրի, Մաշտոցի ՀՏ-ի կողմից «Սէմուար» ՍՊԸ-ում (ՀՎՀՀ՝ 01831977) կատարվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում, որի արդյունքում 03.07.2015թ.-ին կազմվել է թիվ 5104052 ակտը: Ակտի արդյունքով կազմակերպությանը առաջադրվել է տուգանք 150.000 դրամի չափով, որի վճարումը պետք է կատարվեր՝ 105.000 դրամ թիվ 900005241022 գանձնապետական հաշվին (պետական բյուջե), իսկ 45.000 դրամ թիվ 900013439014 գանձապետական հաշվին (հարկային մարմնի զարգացման ֆոնդ):

28.08.2015թ.-ին «Սէմուար» ՍՊԸ-ի տնօրենի կողմից կատարվել են ստուգման ակտի արդյունքում առաջադրված պարտավորությունները «Ակբա-կրեդիտ ագրիկոլ բանկի» միջոցով, սակայն նշված բանկի աշխատակցի կողմից վճարումը կատարվել է սխալ: Մասնավորապես, 105.000 դրամը և 45000 դրամը վճարվել է թիվ 900013439014 հարկային մարմնի զարգացման ֆոնդի հաշվին, իսկ պետական բյուջեի թիվ 900005241022 հաշվին վճարում չի կատարվել: Հարկ է նշել, որ գանձնապետական հաշիվների սխալ մուտքագրման փաստը հաստատվել է «Ակբա-կրեդիտ ագրիկոլ բանկ» ՓԲԸ-ի կողմից, որի վերաբերյալ 2015 թ-ի դեկտեմբերի 18-ի թիվ 01-1226 գրությամբ հայտնվել է նաև ՀՀ ֆինանսների նախարարությանը (կցվում է):

ՀՀ ֆինանսների նախարարության Մաշտոցի ՀՏ կողմից տվյալ դեպքի կապակցությամբ հայտնվել է, որ չվճարված պարտավորության մասով անհրաժեշտ է նորից կատարել վճարում, այդ թվում՝ վճարելով նաև չվճարված գումարների մասով տուգանքներ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Սէմուար» ՍՊԸ-ի կողմից, ըստ էության, կատարվել են ստուգման ակտի պահանջները՝ 150.000 դրամ վճարելով, ինչպես նաև այն, որ սխալը կատարվել է բանկի աշխատակցի կողմից՝ ընկերությունը խնդրում է 03.07.2015թ.-ին կազմված թիվ 5104052 ակտի պահանջները համարել կատարված ժամականակին (առանց ուշացման), ինչպես նաև չեղարկել պակաս վճարված տուգանքի կրկնապատկման մասը:

### **ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ֆինանսների նախարարի 26.06.2015 թ-ի թիվ 5104052 հանձնարարագրի համաձայն ՀՀ ՖՆ Մաշտոցի ՀՏ կողմից «Սէմուար» ՍՊԸ-ում կատարվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում: Արդյունքում 03.07.2015թ.-ին կազմվել է թիվ 5104052 ակտը (այսուհետ նաև Ակտ), որով կիրառվել է «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված տուգանքը՝ գումարով 150.000 դրամի չափով: Ակտում նշվել է, որ նշված տուգանքից 105.000 դրամը պետք է վճարել թիվ 900005241022 հաշվեհամարին, իսկ 45.000 դրամը՝ թիվ 900013439014 հաշվեհամարին:

«Սէմուար» ՍՊԸ կողմից «Ակբա-կրեդիտ ագրիկոլ բանկի» միջոցով 28.08.2015թ.-ին կատարվել ստուգման ակտով առաջադրված տուգանքի վճարումը, սակայն 105.000 դրամը թիվ 900005241022 հաշվեհամարին, իսկ 45.000 դրամը թիվ 900013439014 հաշվեհամարին փոխանցվելու փոխարեն, տուգանքի ամբողջ գումարը փոխանցվել է թիվ 900013439014 հաշվեհամարին: Արդյունքում, ակտով առաջադրված տուգանքը «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածով նախատեսված երկամսյա ժամկետում չվճարելու հետևանքով, այն կրկնապատկվել է:

Քննարկման ընթացքում պարզվեց, որ Ակտով առաջադրված տուգանքի ամբողջ գումարը թիվ 900013439014 հաշվեհամարին է փոխանցվել թյուրիմացության հետևանքով: Ընդ որում, տեղի ունեցածում, ըստ էության, բացակայում է ընկերության մեղքը, քանի որ և 105.000 դրամը, և 45.000 դրամը թիվ 900013439014 հաշվեհամարին են փոխանցվել «Ակբա-կրեդիտ ագրիկոլ բանկ» ՓԲԸ-ի աշխատակցի անուշադրության հետևանքով: Նշված փաստը հաստատել է նաև «Ակբա-կրեդիտ ագրիկոլ բանկ» ՓԲԸ-ն ՀՀ ֆինանսների նախարարին հասցեագրված իր 18.12.2015 թ-ի գրությամբ:

Քննարկվող դեպքում գործ ունենք մի իրավիճակի հետ, երբ ընկերությունը «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածով սահմանված երկամսյա ժամկետում վճարել է Ակտով առաջադրված տուգանքի ամբողջ գումարը, սակայն, ըստ էության, ընկերությունից անկախ հանգամանքների բերումով տուգանքի գումարն Ակտում նշված համամասնությամբ և կարգով չի վճարվել, ինչն էլ իր հերթին ընկերության համար հանգեցրել է ոչ բարենպաստ հետևանքների: Հանձնաժողովի համոզմամբ նման պայմաններում Ակտով առաջադրված տուգանքի կրկնապատկված մասը ենթակա է վերանայման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

**ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝**

«Սէմուար» ՍՊԸ-ի անձնական հաշվի քարտից նվազեցնել ՀՀ ՖՆ Մաշտոցի ՀՏ 03.07.2015 թ-ի թիվ 5104052 ակտով առաջադրված տուգանքի կրկնապատկված մասը:

**Հանձնաժողովի նախագահ՝**



**Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ**